



INSTITUTE
OF PUBLIC
POLICY

ՀԲԻ դիրքորոշումը

*Մանկավարժի վարքականոնի
վերաբերյալ*

2018թ. դեկտեմբերի 27-ին ՀՀ Կրթության և գիտության նախարարության կողմից հանրային քննարկման ներկայացվեց [«Մանկավարժի վարքականոն» \(Էթիկայի նորմեր\) նախագիծը](#):

Հանրային քաղաքականության ինստիտուտը (ՀԶԻ) կարևորում և ողջունելի է համարում այս փաստաթղթի առկայությունն ու դրա քննարկման հնարավորությունը: Ստորև ներկայացված են Վարքականոնի վերաբերյալ ՀԶԻ դիտարկումներն ու առաջարկությունները:

Ընդհանուր բնույթի դիտարկումներ և առաջարկություններ

1. Փաստաթղթում նշված չէ, թե այն մշակման և զարգացման ինչ փուլեր է անցել և ովքեր են Վարքականոնի հեղինակները: Կարծում ենք՝ ներածական հատվածում այդ տեղեկատվության ներկայացումը փաստաթղթին առավել լեգիտիմություն կհաղորդեր, իսկ դրա մշակման գործընթացին՝ թափանցիկություն:
2. ՀԶԻ-ն գտնում է, որ ցանկացած մասնագիտական հանրույթին առնչվող բարոյական կարգավորման հարցերն առաջին հերթին պետք է սկսել քննարկել տվյալ հանրույթի հետ: Կարծում ենք՝ ուսուցիչներն ու կրթության մյուս շահառուները (ծնողներ, աշակերտներ) պետք է լինեն այս Վարքականոնի փաստացի հեղինակներն ու նախաձեռնողները: Միայն այդ պարագայում է հնարավոր ակնկալել, որ փաստաթուղթը կարտացոլի մասնագիտական հանրույթի և շահառուների պատկերացումներն ու շահերը, իրական հիմնախնդիրներն ու դրանց հաղթահարման իրատեսական ուղիները: Վերջապես, նախագծի մշակման առաջին իսկ փուլերից նշված խմբերի ներառումը դրա հետագա իրագործումը ևս կդարձնի շահագրգիռ ու մասնակցային:
3. Հաշվի առնելով վերոնշյալը՝ կարծում ենք, որ կրթության լիազոր մարմինը պետք է ապահովի փաստաթղթի քննարկման այնպիսի լայն, մասշտաբային ու ներառական գործընթաց, որը հնարավորինս կփոխլրացնի Վարքականոնի մշակման սկզբնական շրջանում մասնագիտական հանրույթի պասիվ մասնակցությունը: Ընդունելի մեկ այլ տարբերակ է Վարքականոնի մշակման նոր գործընթացի մեկնարկը՝ արդեն շահագրգիռ բոլոր կողմերի ակտիվ մասնակցությամբ:
4. Հաշվի առնելով վերոնշյալը՝ կարծում ենք, որ Վարքականոնի 5-րդ բաժնում (ուսուցչի էթիկայի նորմերի կենսագործումն ու վերահսկումը) նախատեսված ուսուցչի էթիկայի նորմերի կենսագործման ու վերահսկման առաջարկվող մեխանիզմները, մասնավորապես՝ դպրոցներում էթիկայի հանձնախմբերի ձևավորումն ու վերահսկիչ գործունեությունը, խիստ վաղաժամ է: Էթիկայի նորմերի արմատավորումն ու պահպանումը տևական, մշակութաստեղծ գործընթաց է: Վերահսկիչ և պատժիչ (անուղղակի) գործառույթներ ունեցող մարմինների գործունեությունը խոչընդոտելու է այդ մշակույթի ամրապնդմանը, ուսուցիչների անհարկի դիմադրություն է առաջ բերելու: Նման հանձնախմբերի գոյության նպատակահարմարության հարցը կարող է քննարկվել Վարքականոնի՝ տևական ժամանակ գործողության մեջ լինելուց հետո միայն:
5. Կարծում ենք նաև, որ Վարքականոնի արդյունավետ իրագործումն ապահովելու համար կարևոր է դրան «աջակցող» այլ ծրագրերի ու մոտեցումների որդեգրումը: Օրինակ՝ փաստաթղթում պարբերաբար կրկնվում է ուսուցչի մասնագիտական ինքնակատարելագործման և ինքնակրթության թեզը: Վարքականոնի այս պահանջին ի պատասխան ուսուցիչների կողմից հնչում են տեսակետներ այն մասին, որ դրա համար նախ պետք է արժանապատիվ աշխատավարձ ապահովել, ինքնագարգացմանը խթանող այլ պայմաններ, և այլն: Անշուշտ, վերոնշյալ երկու պահանջներն էլ ինքնին արդարացի են և

հիմնավորված: Ուստի՝ դրանց արհեստական հակադրությունից խուսափելու համար սույն Վարքականոնը պետք է ուղեկցվի այլ փաստաթղթերով ու նախաձեռնություններով, որտեղ պատասխաններ կլինեն ուսուցիչներին հուզող հարցերին:

6. Բացի այդ, քանի որ Վարքականոնը հիմնականում շեշտադրում է ուսուցիչների պարտականությունները («պարտավոր է», «պետք է», «պետք չէ», և այլն), այն գործողության մեջ դնելուց հետո հարկավոր է հավասարակշռել ուսուցչի իրավունքների (և հատկապես՝ աշխատանքային իրավունքների) իրազեկման լայն արշավով: Հակառակ պարագայում դիմադրությունն այս փաստաթղթին միայն կամրապնդվի՝ որպես միակողմանի, ուսուցչի վրա լրացուցիչ բեռ դնող լծակի:
7. Կարծում ենք՝ փաստաթղթից պետք է դուրս բերել այն հիմնախնդիրներն ու դրույթները, որոնք կարգավորվում են այլ իրավական ակտերով, օրինակ՝ ՀՀ քրեական օրենսգրքով: Այդպիսին է, օրինակ, 4.6 կետը («Կաշառք վերցնելը կամ կաշառք տալն անհամատեղելի են ուսուցչի մասնագիտական էթիկայի հետ»):
8. ՀՔԻ-ն դրական և ողջունելի է համարում փաստաթղթում տեղ գտած որոշ կոնկրետ էթիկական դրույթներ: Դրանք են, օրինակ, Վարքականոնի.
 - 3.9 կետը. «Ուսուցչի կողմից իր սովորողին վճարովի կրթական ծառայությունների մատուցումն արգելվում է»:
 - 3.10 կետը. «Ուսուցիչն իրավունք չունի իր կատարած աշխատանքի դիմաց աշակերտներից կամ նրանց ծնողներից լրացուցիչ վարձատրություն ակնկալելու և պահանջելու՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Եթե ուսուցիչը կատարում է մասնավոր աշխատանք կամ զբաղվում է մասնավոր գործունեությամբ (պրակտիկայով), ապա նրա վարձատրության պայմանները պետք է համաձայնեցվեն աշխատանքի սկզբում և գրանցվեն պայմանագրում»:
 - 4.8 կետը. «Ուսուցիչը չպետք է դիտավորությամբ իջեցնի իր դասավանդման որակը, որպեսզի սովորողին դրդի դասերից դուրս, մասնավոր հիմունքներով իր կամ մեկ այլ ուսուցչի մոտ պարապելու, քանի որ դա անուղղակի կոռուպցիա է և մասնագիտական պարտականությունների կատարման դիտավորյալ թերացում»:



Նշված դրույթները համահունչ են դեռևս 2017թ. ՀՔԻ և ԹԻՀԿ համահեղինակությամբ հրապարակված «Կոռուպցիոն ռիսկերի գնահատում ՀՀ հանրակրթության բնագավառում» [գեկույցում](#) տեղ գտած ՀՔԻ հետևյալ առաջարկություններին.

- ✓ «Օրենսդրորեն արգելել առարկան դասավանդող ուսուցչի կողմից վճարի դիմաց մասնավոր պարապմունքների տրամադրումն իր աշակերտներին՝ այն սահմանելով որպես էթիկայի կանոնների խախտում՝ անկախ այն հանգամանքից, թե որտեղ են անցկացվում այդ դասընթացները (տանը թե դպրոցում)»:
- ✓ «Սահմանել և կիրառել պատասխանատվության միջոցներ մանկավարժական անձնակազմի նկատմամբ և դպրոցի տնօրինության համար՝
 - վճարովի պարապմունքներին մասնակցության դրդելու նպատակով աշակերտների և/կամ նրանց ծնողների վրա ցանկացած տեսակի ներգործության համար (օրինակ՝ թվանշանի անհիմն ցածրացում և այլն),
 - վճարովի պարապմունքի հաճախող աշակերտի թվանշանի անհիմն բարձրացման համար (առաջադիմության կեղծ գնահատման)»:

Դրական համարելով այս և նմանատիպ այլ դրույթների ներառումը նախագծում՝ կարծում ենք, որ մի շարք այլ նորմեր վերանայման կարիք ունեն:

Մասնավորապես.

9. Առաջարկում ենք 3-րդ բաժնում (Ուսուցչի հարաբերությունները աշակերտների, մանկավարժական կոլեկտիվի, ծնողների, հասարակության եվ պետության հետ) ավելացնել հետևյալ էթիկական պահանջը. «Ուսուցիչն իրավունք չունի դրսևորել վարքագիծ, որը որևէ կերպ կարող է վնասել աշակերտի ֆիզիկական, հոգեբանական կամ հուզական վիճակին (ֆիզիկական և մարմնական պատիժ, աշակերտների նկատմամբ որևէ ոտնձգություն, աշակերտների նկատմամբ անհիմն կամ չափից շատ պահանջներ, շարունակաբար ցուցադրվող քննադատություն, սարկազմ կամ ծաղրանք, աշակերտների նկատմամբ թշնամանք, մերժում, վիրավորանք, հասարակական մեկուսացում, և այլն)»:
10. Փաստաթղթի 3.29 կետի («Ուսուցիչը պետք է ընտրի իր իրավունքների և ազատությունների իրացման այնպիսի ձևեր և եղանակներ, որոնց հետևանքով չեն խախտվում երեխաների իրավունքները, այդ թվում և՛ չընդհատվող կրթության իրավունքը») ձևակերպումն անհասկանալի և խնդրահարույց է: Մարդու հիմնարար իրավունքներն ու ազատությունները իրար հակասող բնույթ չունեն, դրանք բխում են իրարից: Հետևաբար, առաջարկում ենք այս կետի ձևակերպումը փոխել, կամ ենթակետերով բացատրել հնարավոր, ենթադրյալ իրավիճակները, որտեղ հնարավոր են երեխաների իրավունքների խախտումներ:
11. Առաջարկում ենք 4-րդ բաժնում (Ակադեմիական ազատություն, տեղեկատվության եվ ռեսուրսների օգտագործում, հակակոռուպցիա) ավելացնել նոր կետ՝ հետևյալ խմբագրությամբ. «Ուսուցիչը, ի պաշտոնե, իրավունք չունի կրթական հաստատությունում զբաղվելու քաղաքական քարոզչությամբ՝ իր պարտականությունների կատարման ժամանակ: Ուսուցիչը պետք է համոզված լինի, որ քաղաքական ուժերի, կարծիքների կամ գործողությունների և իր ծառայողական պարտականությունների միջև բացակայում է շահերի բախումը»:
12. Առաջարկում ենք 4.7 կետը («Ուսուցիչը չպետք է որևէ կերպ ակնարկի նվեր ստանալու ցանկության մասին, ուղղակի ցանկություն հայտնի կամ համաձայնության գա այլ ուսուցիչների հետ՝ սովորողների կամ նրանց ծնողների միջոցով իրեն նվերներ մատուցելու հարցում») լրամշակել հետևյալ դրույթներով.
 - 12.1 «Ուսուցիչն իրավունք չունի ընդունել դրամական նվերներ աշակերտներից, ծնողներից կամ գործընկերներից՝ ի պատասխան իր ծառայողական պարտականությունների կատարման:
 - 12.2 Ուսուցիչը կարող է ընդունել նվերներ, որոնց անվանական արժեքը չի գերազանցում XXXXXXXX ՀՀ դրամը և որոնք տրվում են ուսուցչին որպես երախտիք իր աշխատանքի դիմաց (օրինակ՝ ուսումնական տարվա ավարտին):
 - 12.3 Ուսուցիչն իրավունք չունի ընդունելու նվերներ, որոնք կարող են խախտել նրա մասնագիտական խոհեմությունը կամ որևէ առավելություն/արտոնություն ընձեռեն նվերը տվողին»:
13. Փաստաթղթի Հավելվածում, որտեղ հիմնական հասկացությունների պարզաբանումն է տրված, առաջարկում ենք կատարել հետևյալ փոփոխությունները.

- 13.1 «Ակադեմիական ազատություն» հասկացությունը փոխարինելի հետևյալ ձևակերպմամբ՝ «Անձնակազմի և սովորողների ուսուցանելու և ուսանելու, հետազոտություն անելու, դասավանդման և հետազոտական արդյունքների ազատ տարածման իրավունք, անձնակազմի՝ իրենց հաստատության կամ համակարգի վերաբերյալ ազատ արտահայտման իրավունք, կրթական կամ այլ մասնագիտական կառույցներում մասնակցելու իրավունք»: Առաջարկվող ձևակերպմամբ ակադեմիական ազատությունը սահմանվում է որպես իրավունք, այլ ոչ թե պարզապես «ստեղծագործական և հետազոտական աշխատանքի ազատություն», ինչպես նախատեսված է նախագծի տեքստում:
- 13.1 «Արժանապատվություն» հասկացությունը սահմանելիս առաջնորդվելի իրավունքահեն մոտեցմամբ: Ելնելով Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի առաջին կետից, ինչպես նաև՝ ՀՀ Սահմանադրության 3-րդ և 14-րդ հոդվածներից, առաջարկում ենք «արժանապատվություն» հասկացությունը սահմանելիս դիտարկել այն որպես յուրաքանչյուրին բնատուր իրավունք, այլ ոչ թե՝ որևէ գործունեության արդյունքում ձեռք բերվող առավելություն: Հետևաբար, առաջարկում ենք «Մարդու արժանապատվություն» հասկացությունը փոխարինել հետևյալ ձևակերպմամբ. «Յուրաքանչյուր մարդու, անկախ նրա ծագումից, սեռից, տարիքից, կրոնական կամ ռասայական պատկանելությունից, կամ այլ հատկանիշներից, ի ծնե տրված միևնույն արժեքը և հիմնարար իրավունքները»:
14. Փաստաթղթում առկա են նաև այլ խնդրահարույց և ոչ հստակ ձևակերպումներ: Օրինակ՝ 3.18 կետը («Ուսուցիչն ունի խրախուսվելու իրավունք: Մասնագիտական գործունեության ոլորտում նրա անձնական ձեռքբերումները չպետք է մասն ստվերում»): Կարծում ենք՝ այս և նմանատիպ դրույթները չեն առնչվում մանկավարժի վարքականոնին, քանի որ դրանց իրագործումն այլ սուբյեկտների (դպրոցի տնօրեն, ԿԳՆ, այլ պատասխանատու անձինք և կառույցներ) վարքով է պայմանավորված: Ուսուցչին խրախուսելու պահանջը կարող է զետեղվել այլ փաստաթղթերում (օրինակ՝ դպրոցների ղեկավար կազմի պաշտոնի անձնագրերում, դպրոցի ղեկավար կազմին ներկայացվող պահանջներում, այլ նորմատիվ փաստաթղթերում):